ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-Ը ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ N 24-Ն

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականությունը համարվող Գ.Նժդեհի փողոցի 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող ընդհանուր օգտագործման հողամասից տարանջատել 35 քմ հողամաս և այն հատկացնել նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի համար էլեկտրական ենթակայան տեղադրելու /կառուցելու/ համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ընդունել համապատասխան որոշում և նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր հողամասի հատկացման գործընթացի կատարման ուղղությամբ:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20-Ը ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ N 25-Ն**

«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,01 ՀԱ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թ դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ և 31-րդ կետերի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 07.06.2017 թ թիվ 77 եզրակացությունը.

**Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին վարձակալական հիմունքներով պատկանող 02-002-0064-0014 **ծածկագրի 0,01հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորի նպատակային** նշանակությունը փոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նշանակության՝ կապի գործառնական նշանակության:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$–րդ հոդվածի 30-րդ մասի սահմանված կարգով նշված փոփոխության արտացոլումը հերթապահ քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կառավարության 2007թ օգոստոսի 9-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունը:

3.Փոփոխված հողակտորները պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2017թ հողային հաշվեկշռում:

4.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վ. Սուքիասյանի վրա:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-Ը ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ N 26-Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2006-2011 ԹԹ. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԻՆՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Համաձայն <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը.**

**Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. **Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի 2006-2011թթ. արխիվային փաստաթղթերը հանձնել պետական արխիվի Ապարանի տարածքային բաժնի տնօրինմանը:**

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-Ը ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ N 27-Ն

## ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող 0,45291 հա հողամասերը օտարելու աճուրդ-վաճառքի միջոցով:

2.Հաստատել հողամասերի վաճառքի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակի:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ-վաճառքի հրապարակայնությունը, կազմակերպել անհրաժեշտ աշխատանքներ աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Ծածկագիր | Նպատակային նշանակություն /հողատեսքը | Մակերեսը /հա/ | Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Հավելաճի քայլը /ՀՀ դրամ/ | Անվանումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բաղրամյան 64/9 | 0138-0104 | Բնակ/հաս | 0,06 | 437.400 | 24.000 | Հաս.կառուցապատ |
| 2 | Բաղրամյան 101/1 | 0121-0207 | Բնակ/հաս | 0,0114 | 114.000 | 6000 | Հաս.կառուցապատ |
| 3 | Բաղրամյան 43/11 | 0063-0036 | Բնակ/բնակ | 0,00618 | 75.100 | 4000 | Բնակ.կառուցապատ |
| 4 | Բաղրամյան 87/1 | 0142-0010 | Բնակ. հաս | 0,0385 | 280.700 | 15.000 | Հասարակական |
| 5 | Բաղրամյան 18/1 | 0058-0138 | Բնակ/բնակ | 0,0186 | 226.000 | 12000 | Բնակ.կառուցապատ |
| 6 | Դարյան 10/4 | 0128-0049 | Բնակ/հաս | 0,2075 | 840.400 | 45000 | Հաս.կառուցապատ |
| 7 | Դարյան 49/2 | 0120-0027 | Բնակ/բնակ | 0,0235 | 95.200 | 5000 | Բնակ.կառուցապատ |
| 8 | Գայի 4/4 | 0082-0027 | Բնակ/հաս | 0,00483 | 72.500 | 4000 | Հաս.կառուցապատ |
| 9 | Նժդեհի 13/14 | 0065-0092 | Բնակ/բնակ | 0,0024 | 72.000 | 4000 | Ավտոտնակի կառու |
| 10 | Հերոսամարտի2րդ փող.նրբ4/1 | 0049-0067 | Բնակ/բնակ | 0,08 | 194.400 | 10000 | Բնակ.կառուցապատ |

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-Ը ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ N 28-Ն

## ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն, հիմք ընդունելով անշարժ գույքի գնահատման,,Ֆլորես,, ԱՏ ՍՊԸ մասնագի-տական եզրակացությունը.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին դասական աճուրդ վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող, Բաղրամյան 14 հասցեում գտնվող նախկին գրադարանի **428,39 քմ մակերեսով տարածքը:**

2.Հաստատել շենքի տարածքի վաճառքի լոտերի քանակը՝ 5 միավոր:

3.Հաստատել շենքի տարածքի վաճառքի մեկնարկային գինը՝ 1 քմ՝ 65.000 ՀՀ դրամ, հավելաճի քայլը՝ 6 %:

4.Համայնքի ղեկավարին՝

ա/. ապահովել յուրաքանչյուր լոտին համապատասխան տարածքի չափագրման աշխատանքները և գրանցման վկայականների առկայությունը:

բ/. ապահովել աճուրդի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, ձեռնարկել անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ աճուրդը պատշաճորեն նախապատրաստելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան